


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին յայտնի 40 ՄԶԸ.
Գաւառացի 2 լիւր
Վեցամս. Կ. Պօլսոյ 5 ՄԶԸ.
Գաւառացի 1 լիւր
Օտար երկիրներու 50 Ֆր.
Գանձման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ 5: աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ:
Իւրաքանչիւր թիւ 40 վարա արծ:



ԼԵԱԳԵՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ծախքը խորագրութեան վրայ է:
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խորագրի-
ն—Տնօրէնին արտօնագրով: Ղալա-
թիս Սանտրքըլարի Հաստիսի թիւ
198, Կարօ խան, Մասիսի գրասեն-
եակը:
Հանրութեան ճանրութեան նա-
մակ չմտնուի:
Չտարած նամակ, յողում, եւ
եւս չմտնուի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԽՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 46 ՅՈՒԼԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օրուան խնդիրներուն լուծման
վրայ տակաւին կարեւոր լուր մը չկայ,
և առկա կը մնան մինչև որ կերպիւ-
րին վերջ գտնեն: Նախարարական
տաղետայր միշտ մի և նոյն վիճակի
մէջ է, թէպէտ թէրճէմանը Հագի-
դէթ լրագիրը կըսէ թէ նախարարու-
թիւնը մնայուն և հաստատ գիրք մը
պիտի ունենայ 'ի մօտոյ: Ելմտական
խնդիրը Պ. Ֆրէմիսի միջոցաւ նոր ծը-
րագրերու կերպարանայ ներքեւ յուշ-
ւեցաւ, բայց վերջ մը չունեցաւ: Կը
կարծուի որ Պ. Ֆրէմի քանի մը ծը-
րագրեր ներկայեցրէ, որոց ամենէն
նորն էր Օսմանեան դրամոյ միացման
ծրագիրն հանդերձ փոխառութեամբ
մը, որոյ համար լէվընթ Հէրըլը լը-
րագիրը կ'ըսէ թէ ընդունուած է:
Բայց այս լուրը տարակուսելի կը թը-
ւի: Այսօրուան նախարարութեան
չատ մը ծրագրեր ներկայացան, բայց
և ոչ մին դործադրեցաւ, և ելմտա-
կան խնդիրը միշտ անլոյծ մնաց: Եւ-
րոպայի լրագրաց էջերն աչքէ անցու-
նելով, Բերայէն դուրս շաւաղե-
րու մէջ կը տեսնենք թէ տէրութիւն
ները կարելի է որ քաղաքական խըն-
դրոց մանաւանդ Հելլենականին
լուծուին եւս: Ելմտական խնդիրը
ձեռք առնուած և զայն Պէրլինի վե-
հագործողին թիւ տունագործութեան
համեմատ լուծել ուզեն, այսինքն խա-
ռըն յանձնախումբ մը կարգելու ա-
ռաջարկը նորոգեն: Բայց 'ի բաց
թողով այն իրողութիւնն' որ յիշեալ
յանձնախումբը Բ. Դրան լիազօրաց
կողմէն ընդունուած չէր, եւնիպե-
րելով նաեւ թէ կազմուի, արդեօք
ստակ կամ նոր եկամուտ պիտի բե-
րէ: Այսօրուան օրս երկիրն աղքա-
տացած և եկամուտները նուազած
են, հարստութեան և եկամտից յա-
ւերման համար բարեւոք վարչութիւն
և բարենորոգումներ պէտք են, որոց
համար լըրտ Սալիսպըրի կ'ըսէ թէ
ստակ կը կարծախ: Ամենէն առաջ
ապահովութիւն հաստատել պէտք է,
առանց որոյ չկայ երկրագործութիւն
և վաճառականութիւն: Բայց ապա-
հովութեան համար լաւ վճարեալ
ոստիկանութիւն պէտք է, որ առանց
ստակի չլինի: Անկախառ դատաւոր-
ներ ունենալու համար լաւ վճարեալ
պետք է լինին, և ասոր համար ալ
ստակ պէտք է դարձեալ ճանա-
պարհներ և երկաթուղիներ պէտք
են, որք նմանապէս ստակ կը կարօ-
տին: Այսչափ պէտքերու հետ 'ի
միասին հարկ է նաեւ 'ի նկատ առ-
նուլ տէրութեան զանազան պարտ-
քերն, որք մօտաւոր կերպիւ կրնան
այսպէս հաշուիլ:

Երկու հարիւր միլիոն ոսկի Բօն-
սօլիտէ պարտք, կամ զանազան ար-
ժեթուղթով արտաքին և ներքին փո-
խառութիւնը. երսուեն միլիոն պա-
տերազմէն 'ի վեր դիզուած երեւոյն
պարտք, այսինքն գանձուէն Ղալա-
թիոյ Պանքաներէն ըրած փոխառու-
թիւնները. զինուորական և նաւային
պաշտօնատանց առած ռազմավե-
րաց և ապրանք փոխարէն մնացած
պարտք. անվճար մնացեալ ամա-
կանք և թոշակք. անկէ վերջը կու-
ղայ ենթադրական կերպիւ 42 միլիոն
չըջաբերութեան հանուած 46 միլիոն
թղթադրամին այժմեան մնացած գու-
մարը. դրամական միութեան և բա-
րենորոգման համար Մէթալիքն և
Պրինսիպ ամենամեծ մարը, բայց 'ի
տանտոյներէն կամ հինգնոյններէն,
բառեալ հարկ լինելով, ասոր համար
ալ պէտք է երեք միլիոն հաշուել:
Քառասուն երկու միլիոն Ռուսական
տուգանքը հանդերձ Ռուս վաճառա-
կանաց և այլոց տուրքիք հասուց-
մամբը: Այս ամենը կընէ 230 միլիոն,
բայց 'ի յետագեալ կարողութեն, ու-
րոց համար, ինչպէս նաեւ ելմտական
և վարչական բարեւոքման համար ան-
միջապէս պէտք եղած գումարն 'ի
հաշիւ առնելով կը հետսի որ ելմտա-
կան գանձուէն պարտքն երեք հարիւր
միլիոն ոսկիէն աւելի գումարի մը կը
հասնի, որուն եթէ հարիւրին մէկ
միայն տոկոս տրուի, տարին 3 միլիոն
ոսկի եթէ 20/0' վեց միլիոն կընէ,
մինչդեռ եկամուտներն հազիւ 45
միլիոն կը հասնին այժմ: Այսչափ
պիտոյից դէմ Բ. Դուրը նոր եկամու-
տից աղբիւրներ փնտռելով, մասամբ
լուծել նաեւ արդի վեճի հարկ տեսաւ,
և եւրոպական երկիրներու մէջ եղած
թաթէնթի տուրքն հոս ևս հաստա-
տելու համար կանոնադրութիւն մը
լուծադրեց և չըջարեալականաւ մը
գնապանաւանց հաղորդեց: Բայց
Ռուսիոյ դեսպանէն զատ միւսները
դեռ իրենց հաւանութիւնը չտուին:
Արդ' երկրին վաճառականութեան և
սեղանաւորութեան ամենամեծ մա-
սըն օտար հպատակաց ձեռք լինելով,
արդարութիւն չէր որ անոնք ամեն
տուրքէ ազատ մնան և բեռը միայն
խեղճ տեղացւոյ վրայ ծանրանայ:
Ենթադրեմք թէ Ղալաթիոյ հարուստ
սեղանաւոր մը, որոյ հաշիւ հազարա-
ւոր ոսկիներ են, տուրքէ ազատ մը-
նայ, և տեղացի լուսնայիթով մը տուրք
տայ: Հակերթով ապրանք դարձնող
մեծ վաճառականը տուրքէ ազատ լի-
նի և չուկայի խանութպան մը թա-
թէնթ վճարէ՝ պարզապէս վասն զի
առաջինները փեղոյր, իսկ վերջին-
ները ֆէս կը դնեն, միթէ կարելի է
որ տեղացին օտար հպատակաց հետ
կարենայ միջոյլ հարստութեան, ճար-
տարութեան և արուեստի մէջ, և
միթէ կարելի է դարմանալ օտարաց

հարստութեան և տեղացւոյ խեղճու-
թեան վրայ: Բայց արդեօք դեսպա-
նաւորներ այս խորհրդածութիւններն
'ի նկատ պիտի առնուին:

ԱՆԳՂԻՆԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ
ՅԱՐԵՆԻՒՄ

(Ճարտնախնէն և վերջ Բէն 2375)

«Եթէ այսօրուան օրս Արեւելքը
բաժնող երկու կուսակցութեանց մի-
ջև զուգակշիւ մը հաստատուելու գեղմը,
հետեւեալ եղբակցութեան կը հաս-
նիմք:

Հին թուրքաց մէջ բազում զեղծ-
մանք և նախապաշարմունք կան:
Բայց քանի մը հին և բարի աւան-
դութիւններ կը պահեն դեռ, այն է
կրօնական զգացումը, վեհանձն
պարկեշտ բնաւորութիւն մը, արդա-
րութեան սէր, քրիստոնեայ տարրին
պաշտպանութիւն առանց սակայն բա-
ցաձակ հաւատարմութիւն ուղեւոր:
Այս կուսակցութիւնն երկրին մէջ
մեծ մասնութիւն կը կազմէ:

Իսկ «Երեսօտար թուրքաց» քով
առեւելքի թեւ զեղծ քաղաքակրթու-
թիւն մը կը տեսնուի, առանց այն
բարոյական և լուրջ կրթութեան որ
աղբուկապէս կրնայ օգնել Արեւելից
վերածնութեան: «Գաղափար» և «Եր-
աշխիւմութիւն» բառերուն վրայ ա-
ռատ տեսութիւններ. սխալ հասկը-
ւած և չարաչար դործադրուած աղ-
գաթիւրութիւն մը, որ ոչ-մասմետական
ժողովրդոց դէմ նախանձուտ և տղա-
յական ատելութեան մ'է կ'ործնա-
կանի մէջ ամեն պարկեշտ և խելացի
միջոցներու բացակայութեան ծնած է:
Աստիք խիստ փոքր կուսակցութիւն
մը կը կազմեն թուրքից մէջ և ամե-
նուն ալ համակրութիւնը կորուսած են:

Վերոգրեալներէն դիւրաւ կրնայ
կրնայ հասկնալ թէ քրիստոնեայ
տարրն, որ այս երկու հակառակ հո-
սանաց միջև կը գտնուի, զինք իւր
տիրապետութեան ներքեւ պահող
կառավարական դարաւոր դրոշ-
մեան դէմ իւր խորին դժգոհութիւն-
նըն յայտնելով հանդերձ, տակաւին
հակում մը կը ցուցնէ հին կուսակ-
ցութեան, որ դէթ էտպէս թշնամի
չէ իրեն, մինչդեռ «Երեսօտար»
թուրքից, նկատմամբ ունեցած խոր-
շուսն ու հակակրութիւնն օր քան զօր
կաւերման:

Այսօր քննեմք թէ Արեւելից մէջ
գտնուող Անգղիական երեսփոխանը
(դեսպանը) հինգ վեց տարիէ 'ի
վեր ենչ ընթացք բռնած են երկրին
այս քաղաքական վիճակին առջև:

Այս քանի մը տարուան միջոցէն
առաջ, Անգղիական աշխարհավարու-
թիւնը թէ և իւր յայտնի նախապա-
տութիւնը ցուցած էր առաւելակշիւ-
թիւն ունեցող տարրին համար՝ Ա.

րեւելից մէջ իւր շահերն 'ի հաշիւ
առնելու պարտականութեամբ, որք
Պալմանին կրօնական դերադասու-
թիւնը ճանչող միլիոնաւոր մահմե-
տականաց վրայ իւր ունեցած վեհա-
պետական իրաւանց հետ սերտիւ
կապուած են, այսու ամենայնիւ որ
և է միջոց անտես չէր ընել խալի-
ֆայից պետութեան ոչ-խալիֆ ժողո-
վրդոց համակրութիւնն ալ շահելու
և միշտ Դրան խորհուրդ տալու համար
որ անոնց տխուր վիճակը բարւոքէ:
Թէեւ տիրող և նուաճեալ ցեղերուն
միջև բացարձակ հաւասարութիւն
հաստատելու խնդրոյն վրայ շատ չէր
սնդեր: Բայց վերջին ժամանակաց
մէջ այս աշխարհավարութիւնն էա-
պէս տարբեր դարձուածը մ'առա-
ցաւ, որովհետեւ վեհ. թողութե-
ւոյն Կ. Պոլսոյ ներկայիչները ջանա-
ցին հրապարակաւ բացառիկ համա-
կրթութիւն մը ցուցնել թուրք տար-
րին՝ 'ի միտս քրիստոնեայ տարրին:
որ սակայն ոչ նուազ արժանի է հա-
մակրութեան: Եւ աւելի տարօրի-
նակն այս է որ Անգղիոյ դեսպանաց
այս համակրութիւնն «Երեսօտար»
թուրքից քանի մը զուլինեցան
վրայ կեդրոնացաւ մասնատուարկէս,
որոց քաղաքակրթութեան և յառաջ-
դիմութեան համար ըրած առեւեր-
ւոյթ յայտարարութիւնն հրապա-
րեցին և գերեցին այդ դեսպանաց
վստահութիւնն, որք կը թուի թէ
չափազանց վստահութեամբ տկանջ
կախած էին անոնց ներշնչութեանց
և խորհրդոց: Այսպէս ահա տեսնը-
ւեցաւ որ քրիստոնեայնական դաւա-
ռաց մէջ դործուած վերոյիշեալ կու-
տորածները թուրքիս նստող Բըրի-
տանական դործակատարաց կողմանէ
չափազանց թեթեւեղ պատմուած
էին. ստուգուեցաւ որ ինչ ինչ տե-
ղեկութիւնը չափազանց աճապարա-
նօք հաղորդուած էին Անգղիական
կառավարութեան, և յետոյ հասկը-
ւեցաւ որ սխալ էին և մինչև իսկ կու-
սակցական ոգւով մը դրուած: Վեր-
ջին ժամանակներս իսկ կապոյտ տեա-
րին մէջ պաշտօնագէս Լոնտրա հա-
ղորդուած տեղեկութեանց այլ և այլ
աղբիւրներուն միջև յայտնի հակա-
սութիւնը տեսնուեցան:

Սիրելի է մեզ հաւատալ թէ այս
տեղեկութեանց խմբագրութեանն ու
հաղորդման մէջ անկողմնակալութիւն
ու անկեղծութիւն 'ի դործ դրուած
լինելու էին. բայց ոչ նուազ ստոյգ-
է թէ Անգղիոյ համբաւը, ցաւով կը
հաստատուէր զայս, և այն առանգա-
կան համակրութիւնը՝ զոր համայն Ա.
րեւելիցք առանց բացառութեան ըն-
ծոյցած էին անոր, հակառակ անորաշ-
խարհավարութեան մէջ տեսնուած
ինչ ինչ խտորմանց, ամենամանր վը-
նաս կրեցին, որովհետեւ նախ՝ քը-
րիստոնեայ հասարակութիւնը «Երե-

տասարդ թուրքիոյ » գլուխներուն համար Բրիտանական դեսպանաց կողմանէ ցոյց տրուած բացառիկ և յայտնի համակրութիւնը տեսնելով, որք իրենց գործոց ու խօսից մէջ առաջնական պէս իրենց շահերուն հոգ չտանիլ կը թուէին, քիչ քիչ բոլորովին հեռացան այդ բարձրաստիճան անձերէն՝ վստահ լինելով թէ լաւ ընդունելութիւն չպիտի գտնէին կամ ձրիաբար վտանգի պիտի ենթարկուէին, և Անգղիական աշխարհավարութեան մէջ ուրիշ բան չտեսնուի, բայց եթէ դրապէս զօրաւոր թշնամութիւն մը խաւով չեղող տարերայ գէտ՝ Երկրորդ թուրքաց հին կուսակցութիւնն, որ ինչպէս արդէն ըսինք՝ մեծամասնութիւն ունի իւր շուրջը, ասեցեալ և յարգ չունեցող հակառակ կուսակցութեան ցոյց տրուած այնտեսակետութեանց պատճառաւ դառն յուսաբերութիւն մը կրնայ և մէկ կողմ կեցաւ։ Հետեւանքն այս եղաւ որ Անգղիական դեսպանաց այս տարօրինակ ընթացքն երկրին մէջ ընդհանրապէս թուրքաց և Անգղիոյ աշխարհավարութեան նըկատմամբ ալ քրիստոնէից դժբաղդաւար իրաւացի դժգոհութիւնը դըրդուեց։ Բրիտանական արհեստագործին նկատմամբ աշխատի վրտապահութիւն և համարումիւր, որ այդպիսի փոփոխութիւն մ'անհաւատալի էր թուրքիոյ մէջ, բայց այսօր դժբաղդաւար այս յանկարծական անսպասարկ փոփոխութիւնն ակնհայտ է, և այն աստիճան մեծցած է որ օր մը կրնայ անընկճելի հակակրութեան և ատերկութեան փոխակի, որուն այնչափ կը ցանկան Մեծին Բրիտանիոյ թշնամիները։

Ուստի այս հակակրական հոսանքին առաջն առնելու համար, և Արևելից մէջ դէպքերուն խիստ արագ ընթացից և ամեն մտայ վրաց տիրող ծանր անստուգելիութեան առջև Անգղիոյ աշխարհավարութիւնն անպատճառ արմատական փոփոխութիւն մը պէտք է կրէ։ Պէտք է որ Կ. Պոլսոյ Անգղիական դեսպանը այս վերջին տարիներուն մէջ բռնած բացառիկ աշխարհավարութիւնը մի անգամ ընդմիտ թաղուն, և ըստ առաջնայն՝ Արևելեան ժողովրդեան ամեն կարգ երուն մատչելի լինին՝ անձնաւորութեանց խնդրոց մէջ մտնելէ զուրկ չանալով, որք միշտ դառնութիւններ և վտանգներ յառաջ կը բերեն թուրքիոյ մէջ։ Բայց արձակապէս հաւատար յարաբերութիւններ տաժեն Մահմետական և ոչ-մահմետական հասարակութեանց միջև՝ առանց կուսակցական խտրութեան, մի և նոյն հոգածութիւնը ցուցունեն ամեն նուն նկատմամբ, հաւատարութեան ակըրանց ճշդիւ գործադրութեան նման հսկեն իրապէս, և ոչ թէ պղաւտնական եղանակաւ մը, ինչպէս ըսենք թուրքաց վերջին ժամանակներու վերջապէս իսլամն ու քրիստոնեայն անցեալը մոռնալու և սիրով միաբանելու յարգընէն շարունակ, որովհետեւ ասեւ, կը կրկնեմք, իսլամը քրիստոնէին հետ յարաբերութիւն ունենալու վարժաւած լինելով, քրիստոնեայն կրնայ տակաւին անոր հետ սիրով վարուելու տրամադրութիւն ունենալ, և երկուքն ալ փոխադարձաբար չեն կրնար իրարմէ անցնիլ քանի որ շարունակեն ի միասին ապրիլ։

Եւ այս ամենը պէտք է անյապաղ կատարուի։ Որովհետեւ Անգղիական այսպէս վարուելով իւր յատուկ շահերը պաշտպանած պիտի լինի, և միւս կողմէն՝ Անգղիոյ ձայնն Արևելից համակրութեան արժանի ժողովրդոց քով ամենէն լսելի ձայնը պի-

տի լինի, և յայնժամ ինք այս ընդհարձակ և շրթեղ երկիրներուն մէջ եռանդեամբ փոփոքեալ վերածընթացութիւնն ու բարդաւածումն ապահովելու ամենէն աւելի կարող կը լինի։

Հաճեցէք ընդունիլ . . .
Կ. Պոլսոյ Բ. Գ.
2 յուլիս 1879

ՀԱՌԱՊԱՍՏԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 26 յուլիս.
Լոնտոնի Երկրային մասնախօսին և Կաժ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Եւրոպայի բնակչաց կողմանէ պատգամաւորութիւն մը կերթայ Փարիզ և Լոնտոն։ Գահերէ 26 յուլիս.

Եգիպտական նախարարութեան հըրաժարմանը կ'ապաստուի ընդհանրապէս։ Պուրէշ 26 յուլիս.

Պուրշարիոյ իշխանութեան կառավարութիւնն 150,000 Փրանք յատկացուց Գանուրի բերդերուն քանդմանը համար, որք վերջին պատերազմին շարհիւ Պուրշարիոյ ձեռքն անցած են։

Աթէնք 26 յուլիս.
Երէկ երեսփոխանաց ժողովին մէջ, նախարարաց խորհրդին նախագահ Պ. Քուրումնտըս իւր նախարարութեան հրաժարելուն և վերադարձին պատճառները բացատրեց։

Երմոսկոն նախարար Պ. Տէլիեանի, երկու օրինաց ծրագիր ներկայեց, որոց մին 60 միլիոն Փրանքի փոխառութեան վերաբերեալ օրինաց մէկ յօդուածը կը բարեփոխէ, և պիտի լինի մէջ նախատեսեալ պիտոյից գործածուելու համար յիշեալ փոխառութեան վեց միլիոն Փրանք կառավարութեան տրամադրութեանը ներքև կը դնէ։ Միւս ծրագիրը 1824ի և 1825ի փոխառութեանց վճարման վերաբերեալ օրէնքը կը բարեփոխէ։

Այսօր երկար և ջերմ վիճարկութիւններէ ետեւ ընդդիմադիր կուսակցութեան զլուխներն առաջարկեցին որ վերջիշեալ օրինաց ծրագրերուն վիճարկութիւնն սկսելէ առաջ նախարարութեան վրայ վստահութեան կամ անվստահութեան քուէ արուի։ Ասոր վրայ Պ. Քուրումնտըս արքայական հրամանագիր մը կարդաց որ երեսփոխանական ժողովը կը լուծէ։

Ճշգրտել 26 յուլիս.
Ընդհանուր կառավարչին մէկ հրամանագիրը՝ վերջերս արտատրեալ Սրաքցեղերուն երկիրներն արդէրի տակ կը դնէ և զանոնք կը պարտաւորէ 525 հազար Փրանք պատերազմի տուրք վճարել։

Այս առաւօտ հասած հեռագիրէր
Փարիզ 27 յուլիս
Պոնաբարթեան կուսակցութեան պաշտօնական Օրտը լրագիրը կը հաստատէ թէ ժ. Լ. Նարոյան իշխանը կայսերական ընտանեաց և կայսրութեան ներկայացուցիչներուն գլուխն է։

Մատրիտ 27 յուլիս.
Այսօր թաղապետին շրջապայած ժամանակ պառու իրն մը բար մ'արձակեց անոր վրայ, և ստուգուեցաւ որ խելաղար էր։

Լոնտոն 26 յուլիս.	
Օտ. Բոն.	41 3/4
Փ. Բ.	1865 45 1/8
»	1869 14 3/8
»	1871 55 3/8
»	1872 24 1/2
»	1873 13 3/8
» Եգիպտ.	72 1/4
Անգլ. Գ. Բոն.	98 13/16
Փարիզ 26 յուլիս.	
Օտ. Բոն.	11.95
Գաղ. Բոն.	50/0 82.60
» » » Նոր	84.77 1/2
» » » 50/0	117.72 1/2
Փարիզ (Փոքր Պորտ) 26 յուլիս.	
Օտ. Բոն.	11.95

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վեհ. Սուլթանն առաջին կարգի Մէճիտէի պատուանշան տուաւ երկու տակաւն նախարար Զեյնալի Էֆենտիին։

Շարաթէն կիրակի լուսնալու գի-

շերը կայսերական պալատը վեհ. Սուլթանին նախագահութեան ներքեւ խորհուրդ գումարաւորով մինչև ժամ ինը տեսց։ Մեծ-Եպարքոս խայրէտալին փաշան ալ ներկայ էր։

Երէկ Բ. Գուռը գումարաւած նախարարաց խորհրդին ճէվտէթ փաշան նախագահած լինելով, վաղըթ կը հետեւնէ թէ Մեծ-Եպարքոսին անձնական տկարութիւնը տակաւին չէ անցած։

Արտաքին գործոց նախարար Գաւաթէտտօրի փաշան երէկ թարապիտ երթալով, Եգիպտական խնդրոյն վերայ տեսակցութիւններ ունեցաւ Անգլիոյ և Գաղղիոյ դեսպանաց հետ։

Ուրբաթ օրը Սէլտմըդի արարուղութեան յետոյ վեհ. Սուլթանը Նոմըզ փաշան կայսերական պալատը հրաւիրելով՝ Մէճիտէի ակնակոնու պատուանշանը տուաւ անոր։

Վեհ. Սուլթանին անձնական գանձուն վերատեսուչ Հասան Ֆէհմի Էֆենտիին իւրյի առաջին աստիճանը տրուեցաւ։

Այս առաւօտեան թուրք լրագիրք Բաթմանի օրէնքին պաշտօնական պատճէնը կը հրատարակեն, որոյ թարգմանութիւնը մեք ալ պիտի հրատարակեմք։

Օսմանեան գրամաց միացուցման և կանոնաւորման կարեւոր խնդիրն որոյ վրայ վերջերս այնքան խօսուեցաւ, դրական կերպարանք մ'առնուլ կ'սկսի։ Բ. Գրան և Պ. Ֆրէմիլի միջև կարգադրութեան մը հիմունքն որոշուեցան։ Յիշեալ կարգադրութեան համեմատ Պ. Ֆրէմիլ Օսմ. գրամաց միացուցման գործին իւր վրայ կառնու։ Պէտք է եղած պատրաստութիւնները կատարելու համար եռամեայ պայմանաժամ մը տրուած է Պ. Ֆրէմիլի, և դրամաց փոփոխութեան ու միացուցման գործն այդ միջոցին պիտի սկսի Պղինձը, մէթալիքներն և արծաթէ զրնոցներն և 20 փարանցներն, որոյ մանրութիւնը շատ անպատեհութիւններ կը պատճառէ, շրջաբերութեան պիտի ստնուին, և ասանց տեղադրոյն (բիլլոն) դրամ մը պիտի շնուի, որոյ նիւթն Անգլիոյ և Գաղղիոյ նմանօրինակ գըրամաց պէս պիտի լինի։

Պ. Ֆրէմիլ Բ. Գրան հետ համաձայնելէ և իւր ծրագիրը կայսերական հրամանագրաւ մ'ընդունուելէ ետեւ, պէտք է եղած պատրաստութիւններն ընելու համար ուրաթ օրը Գաղղիա գնաց։

Աղէքսանդրիայէն յուլիս 19 թըւականաւ հետեւեալ հեռագիրը քաշուած է Եւրոպական լրագրաց։

« Բ. Գուռն Եգիպտական հարկին անվճար մնացած մասերուն համար 200,000 Եգիպտական ոսկեց փոխանակագիր մը քաշեց երեք օր պայմանաժամաւ, զոր Եգիպտոսի կառավարութեան ներկայեցին, Եգիպտական կառավարութիւնը կը պահանջէ որ վերջին պատերազմին ժամանակ տուած դէնքերուն և ռազմամթերաց արժէքին փոխարէն գումար մը հանուի վերջիշեալ 200,000 ոսկեցին։ Տէրութեանց ընդհանուր հիւպատոսները գործը կարգադրել կը ջանան այժմ։ »

Լոնտոնայէն եկած վերջին հեռագրաց նայելով, այս գործը մայրաքաղաքիս մէջ պիտի կարգադրի Օսմանեան և Եգիպտական պատուիրակաց միջոցաւ։

Կ. Պոլսէն Եւրոպական լրագրաց քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Եգիպտոսի նախարար Խաիֆ Խամպիլ փաշան ճէզպիլը բնակիլ ուղեր է, բայց Գաղղիոյ կառավարութիւնն հաւանութիւն չէ տուեր։

Մօրնինի Բօսթ լրագրին մէջ հըրատարակեալ հեռագիր մը սուտ կը հանէ այն լուրը թէ Պուրշարիոյ Եւրոպայի խորհրդականութիւնը թողլով Բուռնակին դաւանութիւնը պիտի ընդունի։

Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Օսմանեան տէրութեան ուղղակի իշխանութեանը ներքեւ մնացած երկիրներուն վարչական բաժանումները արեւմտեան պաշտօն ունեցող յանձնախումբին իւր գործն աւարտեր է։ Օսմանեան տէրութիւնն 32 նահանգի (վիլայէթ) և 100 գաւառի (միլիթատարֆութիւն) բաժնուած է։

Այս առաւօտ հրատարակեալ պաշտօնական աղբ մը կը ծանուցանէ թէ Մախսուսէի, Շիրքէթի և Կաւալըլին ներքի շոգենաւերուն մի միայն արծաթ դրամ պահանջին արդէն եղած որոշման հակառակ լինելով, պէտք է եղած տեղեր սաստիկ հրամաններ արուեցան, որպէս զի յիշեալ վարչութիւնը ճանբորդներէն միայն արծաթ դրամ չառնելով, 15օրը կամ ամիսն անգամ մը որոշուելիք սակագինն համեմատ մէթալիք և պղինձ դրամներ ալ ընդունին։

Երկու տարի առաջ Կ. Պոլսի գաւառի նորահնար թնդանօթի մը շինութեան համար Օսմ. կառավարութեանէն արտօնութիւն խնդրող և մերժողական պատասխան ստացող Պէլլիգացի Լըպէլ անուն հարկբաւարտը շարաթ օրն իւր համադրեստով Բ. Գուռը գնաց և Մահմետական կրօնքն ընդունեց։ Իսկն անուն որոշած է Հասան Ալի։

Եւրոպայի արիւնտուշտ կուրը կ'ստուգուի։ Կուրը Պոնիֆայի ճանբորդի մը պատճառաւ ծագեր է։ որ գիւղ մը հիւր լինելէ ետեւ, երբ ճանքան կը շարունակէր, ուրիշ գիւղէ մ'եզող գողեր վրան յարձակեր են Ալպանիացեաց սովորութեան համեմատ՝ այս բանը նախատինք մ'է յիշեալ Պոնիֆային հիւրընկալող գիւղացեաց։ Հետեւաբար երկու գիւղին բնակիչները ստատիկ կուրի մը բըռնուելով բաւական մարդ ջարդուեր է։

Եւրոպական լրագիրք կը ծանուցանեն թէ Սուլթանին թիկնապահութեան համար թունուղէն 30 ձիաւոր Կ. Պոլսի տարուելուն դէմ կեցեր են Գաղղիոյ և թունուղի կառավարութիւնը։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
Է Օ Ն Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
Երէկ իրիւնը դոյուեցաւ	
Այս առաւօտ բացուեցաւ	12.34
Կէս օրին	12.34
Բուռնիկի երկաթուղի	Փր. 45,
Բոյլաղրամ	Լր. 900
ԸՆԹԱՅԻՆ ՊԱՅՆՆԵՐ	
14 Յուլիս	
Ստիկի թէ յիշելու թաժ	Անգլ. Գ. Բ. 4.10
» ֆոխանակութեան	» 3.48
Կ. Պոլսոյ Պոնիֆային	» 6.25
Փրէտի յիշելու	» 4.12
ԸՆԹԱՅԻՆ ԳՐԱՄՈՑ	
16 Յուլիս	
Անգլ. Գ. Բ.	109 22
Կարօճն տակ	» 87 22
Իմիւս իւր	» 89 37
Գըրմից	» 51 20
Մէճիտէի տարբերութիւն	» 6 15

Հինգերորդ » 18
Մէջիտիք » 19
Պրիմ » 336

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Չանաղ-դաւէ 28 յունիս 1879

Խորագրաւոր Մասիս բազմա-
դիւն լրագրոյն

Տարտանդէնն որ Ռոտտիքի վիճակի
թեմերէն մին է, ստիպողական հետա-
դիր գալով, տեղւոյն ազգայինք Գեր. Ս.
առաջնորդէն հրաւիրած էին: Բայց որով
հետեւ տեղական գործերը չէին ներքեր
մեկնել Ս. առաջնորդին, ուստի ըստ ու-
րոշման գաւառական վարչութեան, անդր
ուղեւորեցայ նուազագույն փոխանորդաբար
հաղալ ժողովրդեան պէտքն, որ անծա-
նօթ էր, և տեսանք որ Բողոքականու-
թեան խնդիր մը կայ մէջ տեղը: Քանի
մի տարիէ ի վեր է Բողոքական քարո-
զիչներ քաղաքս երթեկեկելով դաւալ ի
զաղա համայնքս յաջողութեամբ քանի մի
անուսումն երիտասարդներ: Այս ան-
գամ Աղբիւսեանքը Գ. Գրիգոր Պատ-
մաճեան իւր ընտանիքն ևս ի միասին
առնելով եկեր և անպատշաճ փողոցի մը
մէջ Հայոց տուններէ մէկը վարձեր է,
որուն թէ և մեր պատուաւոր ազգայնոց
կողմէն ազգաբարձութիւններ եղած են,
սակայն ինքը շանաւորով դարձեալ այն
տեղ բնակիլ որոշեր է, որ միասնական
ժողովաւորել ալ պիտի լինի: Նոյն տան
դրացի եղող թաղեցւոց և Բողոքականաց
մէջ դժուարութիւն կիցայ կրօնական արա-
րարութեանց տարբերութեան նկատմամբ,
և նոյն իսկ չուկայի մէջ Հայաստանաց
Ս. Եկեղեցւոյ արարողութեանց դէմ յայտ-
նի թշնամոնք և ծաղրանք տեղի կուեն-
նան Բողոքական եղբայր կողմէն: որ
ստուգելու մեծ ցաւ է դանիք այսպիսի
տեսնել, մինչդեռ իրենք օտար չեն, այլ
նոյն ազգի և եկեղեցւոյ դուստրն, անոր
մէկ անդամն, անհատն, անոր մարմն-
նէն և անոր արեւնէն ծնունդ մը:

Ասկէ երթալով խորագրութիւն կը ծա-
ղի երկու կողմանց մէջ. թողեցիք և
և այլը Թաղ. խորհրդոյ կը դիմեն և կը
բողոքեն որ քարոզիչը նոյն տանէ ելնէ
և ուրիշ տեղ մ'երթայ: Խորհրդոյ ան-
դամներն ալ զբարոյիչը կը յորդորեն որ
կենէ: Պ. Մէլիքոս անգղիական հիւպա-
տարին ևս կ'աղաչեն որ ինքն ալ յորդո-
րէ քաղցրութեամբ ելնելու համար, և
Նորին վեհաօրէնին ալ որ ստուգելու բա-
րեւելի և արդարաւոր անձ մի է, կը խոս-
տանայ հանել ռոժ օր միջոց առաջար-
կելով: Հայոց կողմանէ ալ սիրով կըն-
դուտի այս առաջարկութիւնը: Բայց
այս միջոցին ևս ետեւ քանի օրեր ալ ա-
ռաժ քարոզութիւնը տեղի կուենան
քարոզչին տունն, մանաւանդ զիւր ար-
տեսներն: Դանիք կըսեն թէ նոյն իսկ Բո-
ղոքականաց կողմանէ է, որպէս զի Հա-
յոց վրայ ամբաստանելու նիւթ լինի և
այն պատճառաւ չեղլին, և ամենք թէ
Լուսաւորչական Հայոց կողմանէ է, որ-
պէս զի ստիպեն դուրս փախչելու: Բո-
ղոքական եղբայրք կ'առաջարկեն ևս
Պ. հիւպատարին կը դիմեն, անմիջապէս
ստիպանութեան պիտուորներ վրայ կը
հասնեն, և առանց բնութեան Լուսա-
ւորչական Հայոցին որոնք որ այն կողմ-
ը կը որոտահին, անոնց կը դարեն և կը
ճեմեն և կը քաղցեն: և այս կը լինի
Լուսաւորչի կիրակի երեկոյն: Նոյն մի-
ջոցին հայազգի պատուաւորներէն մին
պիտուորներուն այդ աղաքի վարմունքը
տեսնելով կը խափանէ և յաջորդ աւուր
թողուլ կ'առաջարկէ: Թաղեցի և բողո-
քական ժողովուրդը եկեղեցի կուգան և
կը պահանջեն Թաղ. խորհրդին որ ազ-
գեցութիւն ի գործ դնէ և քարոզչին ան-
միջապէս տնէն արտաքսէ, և երբ դա-
նոնք ցրուած կը դուեն Առեւտրական
և Առեւտրական անձնական տնտես-
ութեանց պատճառաւ, իրենց կողմանէ եր-
կու պատուաւոր անձինք և տեղւոյն եր-
կու քահանայները կ'առաջարկեն կը
զրկեն, որպէս զի վաղիկ այս եղելու-
թեանց քննութիւնը ձեռք առնուի և եր-
կու կողմանէ դատուին:

Եւ ահա այս պատճառաւ Ս. առաջ-
նորդը հրաւիրուեալ էր, ինչպէս որ Բողո-
քական եղբայրք կողմանէ ալ Գ. Պատմէն
միասնաբար մը, որ մեր դնային ետեւ հե-
տեւեալ օրն եկաւ հասաւ, Պ. Հիւքքը հա-
յոց ալ Միսիսիս, որ քաղցր և հեղա-
համարյոր բնութեան վերջին անձ մի էր:
Աս Բողոքական անձնական տնտես-
ութեան եկաւ քարոզչին հետ մէկտեղ, և
բաւական ընդարձակ խօսակցեցանք այս
անտեղութեանց նկատմամբ, որուն ան-
շուշտ պատճառ եղած է բողոքական եղ-
բայրք ամբողջ վարմունքն, որ է եկեղե-
ցի և կրօնը նախատել և ծաղրել, և բա-
ւական երկար խօսակցելէ ետեւ ի խա-
ղաղութեան, կրկին տեսակցելու սպայմա-
նաւ մեկնեցաւ:

Հետեւեալ օրն մեր փոխադարձ այ-
ցելութեան պարտքն հատուցանելու հա-
մար Անգղիական հիւպատարանը դնա-
ցինք մեր պատուաւոր ազգայնոց, քան-
զի հոն հիւր էր Պ. Ս. Հիւքքը, և թէ
Վ. Ե. հիւպատարին և թէ Պ. Միսիսիս-
ին հետ դարձեալ երկարօրէն խօսեցանք
և վերջապէս առանց կ'առաջարկեան
միջամտութեան մեր մէջ տնէն բան վեր-
ջացնել որոշեցինք, մեր մեր ազգային-
ներն խրատել, ստատել և յանդիմանե-
լու պայմանաւ, նոյնպէս և իրենք իրենց
յարող մէկ քանիներն, որպէս զի ոչ ևս
սպասիս անտեղութիւնը ծնանին: Վ. Ե.
հիւպատարին կողմէն մեզ եղած սիրովը
և պատուաւոր ընդունելութեան հա-
մար, ինչպէս նաև փոխադարձ այցելու-
թեան ամօթիւ մեր հրապարակական
շնորհակալութիւնն փառքելով յայտ-
նել, որ կը խնդրեմ ազգագրութեան
թերթուղի միայն մէջ ներկայս ընդունել
բարեհաճիք:

Այս ամթիւ տեղւոյն ազգային երկ-
սեռ վարժարանին նկատմամբ քանի մի
աղաքաւ ալ ընդունելիք կը խնդրեմ:

Տեղւոյն մեր ազգայնոց թիւն իբր
160 տունէ կը բաղկանայ: Իրենց ու-
սումնասիրութեան յաջողած են քա-
ղաքէն հոգեկալ վարժարան մի կ'առու-
ցանք երկուեք համար տակի իբր վեց
տարի առաջ, որուն մէջ այսօր ունեն
վարժարանը տնօրէն դատաւոր մի Պոլոս
է Գիւնտի Գալուստեան, յաջակերտաց ժա-
ռանգաւորաց զաւրցի Ս. Երուսաղէմի
վանուց, որ Հայերէն, Գաղղիերէն և
Տաճկերէն լեզուաց հետ ուրիշ կրթու-
թեանց դասերն ևս կ'առնող անձնու-
րաբար, ինքն ինքի լինելով, և ունի իրեն
օգնական մը: Իսկ օրորողաց դասա-
տուն վեց ժամանակ յառաժ հրաժարեալ
լինելուն օրոտճաւաւ, առ այժմ ձեռա-
ւանդ դարձած են օրորողը, և միայն
ուսանաց կը պարտաւոր, մինչև ցնոր պատ-
րաստութիւն վարժուելու: Գաղղիերէն մէջ
բաւական ճարտար ձեռագործներ ու-
նան հետ մէկտեղ պարտաւոր կ'ալին,
զորոք վիճակահանութեան պիտի դնեն
յառաջիկայ օգոստոս ամսոյ մէջ յաւուր
հանդիսի պարգևաւորութեան:

Առեւտրականութեան հետ մէկտեղ
կրօնական ալ լինելուն համար ժողովուր-
դէն, իրենց եկեղեցւոյն համար Տաճկե-
րէնի հոնաւ մանաւոր քարոզիչ վարդա-
պետ մ'ալ պիտի խնդրեն Գեր. Ս. Ա.
առաջնորդէն, անոր ինքնական պէտքն
ինքնին հոգալով հանգանակութեամբ
որուն անուշտ պիտի հասան Նորին
Վերապատուութիւնն, և զայն ոչ ընդ-
երկար յապալելով:

Բարեպաշտ է տեղւոյն ժողովուրդն
և կրօնականը, բայց որովհետեւ իրենց մայ-
րենի լեզուն չեն գիտեր, ուստի եկե-
ղեցւոյ ընկերացւածներէն ալ բնաւ բան
մը չեն հասկերար: Առեւտր քահանայներ
ալ չունեն որ ժամանակ ժամանակ իրենց
խրատ մը խօսին եկեղեցւոյն մէջ: Բայց
օգուտ քաղելով թշնամին եկեր ցորենի
արտին մէջ կրօնական որոմ ցանելու յա-
ջողեր է, թէ և ապալին նոյն իսկ ի-
րենց կողմը որոտցած մէկ քանի ազգա-
լիններն ալ իսպառ ազգին և եկեղեցւոյ
անդամակցութեան հատուածեալ չեն,
և կը յառաժ որ արժանաւոր քարոզիչ
վարդապետ մը հոս գտնուելով ըրո-
րովն իրենց մայրենի Ս. Եկեղեցւոյն
հետ կը կապուին ճանաչելով նորա ուղղա-
փառութիւնն, անարատութիւնն և ողա-
տութիւնն, որ ամեն ազգի ի Քրիստոս
Յիսուս հաւատացելով մէջ խորութիւն
չգիտեր և տնտես համար փրկութիւն
կը քարոզէ:

Արախ եղալ տեսնելով քաղաքին մէջ
բաւական ուսնալ և լուսավոր երկուս
սարդներ ևս, որոնք կ'առաջարկեան
գործերու մէջ ալ ալ պաշտօններու
մէջ կը գտնուին: Տաճկերէն լեզու իրենց
քաջ հմտութեամբ, և ապագային մէջ
հետզհետէ այնպիսեաց թիւն աւելնալու
յոյս կուտայ Պոլոս է Գիւնտի Գալուստեան
աշխատութիւնն, թէ և ազգին կողմանէ
ևս կարեւոր սնակցութիւնն չզայցուի ի
քաջակերութիւն:

Ողբունիս սիրոյ և մեծարանաց մա-
տուցանելով Ձեզ կանխաւ շնորհակալացայ
հաւատարմ' սիրովը հաճութեամբ ներ-
կայս Ձեր ազգագրութեան մէջ հիւրըն-
կալութեան ամթիւ:

Մնամ . . .
Անեղանդութեամբ քահ. Յիւքք

Հետեւեալ նամակն ուղղեալ է տե-
նախկին Հայ աշակերտութեան
վարժարանին (թէ՛ ուսումնաւորաւ և
թէ՛ ոչ ուսումնաւորաւ), և հրատարա-
կութիւնը մեզին կը խնդրուի մանա-
ւորապէս այն աշակերտաց համար,
որք մուսուլմանի կամ այլ արգելքնե-
րով յատկապէս նամակ ստացած չեն:

Տէր .
Վարժարանիս Հայ-Մանուկ ըն-
կերութիւնն, ի տես այն մեծ շարժ-
ման որ առ հասարակ կը տիրէ Հա-
յոց մէջ և այն եռանդին որով վառ-
ւած ամեն Հայ երիտասարդ կը փու-
թայ օգնել իւր ազգին, անապագայ
չմնայով որոշած է և իւրեան ծառա-
յութիւն և օգնութիւն մատուցա-
նել Հայաստանի փրկութեան համար:
Իւր նպատակի որոյ արդիւնք չու-
նէին ազգեցելութիւն վարժարանին
պատերէն դուրս, ընդարձակեց և
իւր գործերու ստապալէզ ընդլայնեց:
որոշեց «Օգնել Հայ ազգին դատու-
արակութեան»:

Սոյն մեծ և սուրբ նպատակին
կատարման համար վարժարանիս Հայ
աշակերտք՝ առանց բացառութեան՝
մի որոշ դուստր կը վճարեն ամսական
և ոմանք ձրիապէս կը դատարանեն
բուժելի Հիւսարի Հայոց աղքատիկ
վարժարանին մէջ:

Սակայն որպէս զի աւելի լաւ կեր-
պով ի գրուի հանէ իւր առաջադը-
րութիւն և մի անխնայ և նուիրա-
կան կապով միայն վարժարանին
յարկերուն տակ ուսանողներն, և այ-
սու ուսումնական և եռանդուն և
երիտասարդաց մի զօրաւոր խումբ
մի գործօն տիւմբ հաստատէ, ըն-
կերութեանն ընդհ. ժողովը որոշեց
միաձայն հաւանութեամբ որ վար-
ժարանէս մեկնող աշակերտք չարու-
նակին իւրեանց անդամակցութիւնը:

Արդ՝ կը փութամը ներկայիս հը-
րաւորել զձեզ, իբրեւ մին Բողոքչի-
նախկին աններէն և ընկերութեան
վարդապետ անդամներէն, որպէս զի հա-
ճիք շարունակել ձեր անդամակցու-
թիւն: Թէպէտ պիտի փութամք քիչ
ատենէն հոգալու ձեզ ընկերու-
թեան վերաբնեւալ կանանաւորը,
սակայն աւելորդ չեմք համարել առ-
չալի յայտնել առ այժմ թէ ընկե-
րութիւն վարժարանիս նախկին ու-
սանող և աղքի Հայկաբան Բրօք. Յա-
կոբոս ճէճիկեանի հովանաւորու-
թեան և պաշտպանութեան ներքին է:
Թէ ինչ եղանակաւ պիտի կատա-
րէ իւր նպատակ, դուրսի անդամաց
թիւն և նուէրքն հասնալէ յետոյ
պիտի որոշուի Գործող մարմինն առ-
այժմ վարժարանիս մէջ է, ուր ա-
մեն կիւրախէ ժողով կը լինի, սոյն
անձնելու անդամ հրաւիրեալ է:

Մի անդամ պարտի առ նուազն
մէկ բաժին 2 դաճեկան արծաթ վը-
ճարել ամսական:

Յուսալով որ պիտի հաճիք մեր
այս հրաւերն ընդունել,

մնամք յորդանոց
4/23 յունիս 1879 ի գիւմայ

Հայ-Մանուկ ընկերութեան
Առեւտրապի Ս. Ս. Միսիս
Ա. Ս. Միսիս Գ. Ն. Միսիս

Գ. Հաճեցէք ձեր պատասխան
հետեւեալ հասցեի գրել:

Գ. Ն. Միսիս Գ. Հաճեցէք ձեռ-
նարկել:

Ձեր նամակներն ընդունել վերջ
կարելի եղածին չափ չառ ճէճիկեան
Պատուելի ատենապետութեամբ մի
ժողով պիտի դուստրի, որոյ համար
մանաւոր հրաւիրալը պիտի ըն-
դունիք:

Խորագիր Մասիս պատուա-
կան լրագրոյ:

Վարժարանիս Տնօրէնութիւնը պա-
տիւ ունի ծանուցանել մեծարգոյ հա-
տարակութեան որ՝ Ս. Սահակեան և
Ն. Վարդուհեան ստանուց և սանուհ
եաց հարցաքննութիւնը սկսած են
14 յունիս չաբաթ օրէն:
Հետեւեալ կարգ աւարտութեամբ:

Յուլիս 14 Շր. Կրօն. Հայկ. Ս. Պատմ.
և Քրիստ.
» 17 Գ. Գաղղիարէն
» 18 Գ. Անգղիարէն, Գ. Գաղղիարէն
» 19 Ն. Թուրք. Աղբիւսեան
» 22 Կիր. Թուրք. Երէն լեզու.
Ամեն աղքատէր և ուսումնասէր
անհատից բաց են վարժարանաց
դասերն:
Ս. Սահ. վրձին: ի գիւմայ Տնօրէնութ.
Սամաթիոյ: Միսիս Գ. Ն. Միսիս

ՄՕՐԻՍ ԿԱՍ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ
ԲԱՐՈՅԱՎԵՊ
ՏԵՄԵ Գ. Գաղղիարէն
Թարգմանեց Պաղ. Սահակի Գ. Հարէնց
Ըստ յանձնարարութեան Արժ. Գ. Վ.
Արուստեանցի

Ամեն կարգի անձանց համար տշ-
խատարութեան և խնայողութեան
ազգու օրինակներ պարունակող սոյն
ընտիր բարդալիցայ, որ 230 ութա-
ծալ երեսէ կը բաղկանայ, մաքուր
տպագրութեամբ հրատարակուած
լինելով, խիստ դիւրաւին, այսինքն
հատը մէկ քառորդ Մէճիկի կը ծախ-
ուի ամեն Հայ գրաւիճաւագ քով:
Վատահ եմք որ սոյն օգտուէա
հրատարակութիւնն իւր արժանի ըն-
դունելութիւնը պիտի գտնէ ընթեր-
ցասէր հասարակութեանն, և այսու
աղեւստուն թարգմանչին սոյն անդ-
րանիկ աշխատարկութիւնը բարո-
յապէս վարձատրուելով՝ պիտի քա-
ջալերուի ապագային մէջ այսօրինակ
ուրիշ օգտակար աշխատութեանց ալ
ձեռնարկել:

Ի Լ Ա Ն
Նիզամիյէ Սարաճիսան անպարը
իշուն չեքայիթի մագարբէրէսի վեճ
իլէ միւպայեա օլունաճաղը էվլէլէ
իլան գրլընան ի.թի սիլն զըլէտէն ի-
թի սիլն պէշ եիւզ զըլէյէ դատար
թաղա մալը ետլլը սիլյաճ քէօսէլէ-
նիս պէշէր զըլէյէ օն ալթը դրուշա
թալիլի էօհտէսիլնտէ դալըլը վէ
թէմուզուն օն սէքիլլէնի չարչէնպիս
կիւնիւ դարարը գաթիսի վերլիւսի
մուգա բրէր պուլունմուշ օլմաղա ի-
թատրա թալիլ օլմալըն եէվլի
մէքբիւրտէ Տարի Շուրայի սաքերլէ
կէլմէլէրի:
14 թէմուզ 1879
Պապը Սէրասքէրի

Չամալճա խաթիթ միւստփաւա:
սընտա ինշա օլունաճաղ հազրի ճէպ-
խանէլէրիլն սագի վէ տիւլարլը-
նըն մաճը հալին եիկիլիսի պիլիսի
նուստ իրթէսի կիւնիւ դարարը
գաթիսի վերլիլէնիլնտէն, եէվլի
մէքպուրտէ Պապը Սէրասքէրիս էպ-
նիլէ գոմիսիսուս կէլմէլէրի:
14 թէմուզ 1879
Պապը Սէրասքէրի

Նիզամիյէ նանը աղիդ տէլիլմէն
լէրի հալլաթլընտան Ֆիրուլթի օ-
լունաճաղ պէշ եիւզ պլն գըլէ քէ-
վիլէն էսմանը սիմ մէճիսիլէ իկիլի
զըլէ հիսապը իլէ նագտէն վէ վիշնիլ
վէրլիլալ պատէհու գալըրըլմաք շար-
թը վէ շերայիլթի սալիլէսի իլէ պէ-
հէր գըլէսի եէտի պուշուր վարա-
յա թալիլի էօհտէսիլնտէ օլալ թէ-
մուզ ըուլմիլն օն եէտիլնի սալը կիւ-
նիւ թէքար միւզայիլտէսի ինրա օ-
լունաճաղընտան, իլթիլաւսնա թա-
լիլ օլմալըն եէվլի մէքբիւրտէ Տա-
րը Շուրայի սաքերլէ կէլմէլէրի:
12 թէմուզ 1879
Պապը Սէրասքէրի



ՍՈՒԹԻՆԿ ԾԻՐՈՐ

Յայտնի է որ երախայք ծնանելէն մինչ երեք տարեկան հասակը դրեթէ շարունակ փորի ցաւ . փորհարու թիւն, ստամոքսի անհանգստութիւն, անքուն մնայ, ջրային զրգռութիւն և այլն կուենան, մանաւանդ աղու հանելու միջոցին, և այս ներքին շեղումը աւելի կը ստատկանան ամառուան տաք եղանակին : Սուծինկ ԾԻՐՈՐը վերոյիշեալ դժուարութեանց ամենուն ալ առաջը կառնէ ու կը բըժլէ, որով երախան կը հանգիստ կը զօրանայ յուրախութիւն մեծ իւր ծնողաց : Գործածողները շատ դո՛ւնեն : Ուղղը կրնայ փորձել . դինն ա՛ ժան է . նորածին երախայից կաթիւ լով կը տրուի, վեց ամիսէն վեր եղողին օրը երեք անգիւն գրգալ . կը ծախուի կ. Պօլիս Ղալաթիա Միլաս . եան և ընկերաց Ամերիկայի մաղաղան :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՆՅԵԱԼԸ ՈՒ ԱՊՐԱՅԱՅ

ԿԱՍ

Աւելցնէ ժողովուրդին

Գրեց Տիրան Գ. Բէյէկեան

Զօնէն, նախարանէն և վերջաբանէն ի զատ, կը պարունակէ աղդին կրօնական բաժանմանց և աղդային Սահմանադրութեան հաստատուելուն պատմական յիշատակագրերն, և համառօտ քննադատութիւնք ա՛նոց վրայ :

Գործոյն մէջ լիովին բացատրուած է նաև աղդային վերակազմութեան անհրաժեշտ պէտքերն :

Կը ծախուի գլխաւոր Հոյ գրքափաճառաց քով . դինն է 2 լըշ . արծաթ :

ՀԱՄԱՌՈՍ

ՄԱՐՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Ի պէտս փորձարանոց և առանց դա՛ստառութիւն առանձինն ուսանողաց :

Այս գիրքը շատ յարմար է մարմնամարզութիւն սովորող ուղղութեան, և խիստ օգտակար գասագիրք մը կրնայ լինի :

Բովանդակութիւնն 240 երեսէ կը բաղկանայ . 130 պատկերք զարդարուած : Գինն է կէս արծաթ մէճիս, մինչդեռ Գաղղիերէն բնագրին դինն է 3 1/2 փրանք :

Կը գտնուի կ. Պոլիս Սուլթան Համալիատ էֆէնտիխան թիւ 17 Նըշան կ. Պէրպէրեանի փորագրատունն և ամեն գրալաճառաց քով :

ԸՆԴՀ. ՊԱՏՄԱՌԻՒՆ ՀԱՄԱՌՈՍ

Աւելցնէ Գրեց

Գրեց Հ. Գրեգոր վրդ. Գովրդեան Միլիթարեան ուսումնէն :

Կը ծախուի վիեննայի Միլիթարեանց գրալաճառանոցին և այլ գրալաճառաց քով . դին 2 փրանք :

ՆԱՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆԻ

Միլիթարեան վեյսնի

Որը վաճառին ի Սեդրոս խան Ղալաթիոյ և այլ գրալաճառաց քով :

Վերջէն Եւեպիս . Նորոգ թարգմանեալ ընտիր հայկաբանութեամբ, ի Գեր. Եղուարդայ Հիւրմիւղեան ի Հայկա հայկական . — դին ֆր. 4.25 :

Պատմութիւն Հայերէն Գրեց Զատուր Բ. սկսեալ չորեքտասներորդ դարէն կը հասնի մինչև մեր օրերը . զրեալ աշխարհաբար լեզուաւ և կալիւր հմտութեամբ . — դին ֆր. 5.50 :

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՈՐԷՆ

Կ. Ս. Իսթիքիս

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

ՂԱԼԱԹԱ ՆՈՐՈ խաւ

ՇԻՐԵԼԹԻ ԽԱՅՐԻԷԻ
ՇՈՂԵՆԱԿԵՐՈՒՆ ԵՐԹԵԿԵԿԻ ԺԱՄԵՐԸ
1879 ՅՈՒԼԻՍ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆԶԵՆ ՅՈՒԼԻՍ 31

ԲՈՒԹՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՂԵՆԱԿԵՐՈՒՆ

Ժամ	Երբեք	Թիւ
10 45	Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 32	
11	Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 20	
11 30	Բ. Ա. Գալաթիէն Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. 34	
12 30	Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 48	
1 45	Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 33	
2 15	Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 32	
3 15	Բ. Ա. Գալաթիէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 20	
4 30	Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 34	
5 30	Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 33	
6 45	Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 4	
8	Բ. Ա. Գալաթիէն Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 49	
10 45	Եկնիմաստէն Մէջար. Պէյիւք. Թար. Եկնիւք. Սթէն. 22	
11	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 25	
11 30	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 2	
12	Պէյիւք. Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 22	
12 45	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 25	
1 15	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 2	
2	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 42	
2 30	Պէյիւք. Արնամ. Օրթաք. Պէյիւք. 25	
3 30	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 48	
8 30	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 2	
10	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 12	
10 45	Արնամ. Գուր. Օրթաք. Պէյիւք. 2	

ԱՐՆԱՄ ԵՒ ԳՈՐԹԱՔ

10 15	Պէյիւք. Բաշա. Գանդ. Ա. Հիսար. Գանդ. Վանիւք. Գանդ. 22
11	Պէյիւք. Բաշա. Գանդ. Ա. Հիսար. Գանդ. Վանիւք. Գանդ. 24
11 30	Արնամ. Վանիւք. Վանիւք. Պէյիւք. Գանդ. Գանդ. 4
12	Պէյիւք. Թար. Պէյիւք. Բաշա. Գանդ. Ա. Հիսար. Գանդ. 17
1 30	Պէյիւք. Թար. Պէյիւք. Բաշա. Գանդ. Ա. Հիսար. Գանդ. 49
3 15	Պէյիւք. Բաշա. Գանդ. Ա. Հիսար. Գանդ. Վանիւք. Գանդ. 24

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի բաց ի կերակի և տօն օրերէ :

Բաժանորդագրութեան տեղն է Ղալաթիա Սանտրոլիար Զատուրեան թիւ 193, Նօրօ խան Մասիսի խմբագրատունը : Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց գրասենեակները .

ԶԱՄԻՆԻՆԻԱ. Ստեփանէֆ. Տէտէնտ.	
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խորոյլ » Եսկիճեան.	
ՊՐՈԹԱ. Ստեփանէֆ. Թանկերեան.	
ՌՈՏՈՒՐ. Արթ. Տ. Արիտակէտ աւազք քահանայ Ֆէպեան.	
ԱԳԻՆԱՆՈՒՊՈԼԻՍ. ՍԱՄՍՈՒՆ. ՏՐԱՊԵՆՈՒՆ. Ս. Եթմէքեան Եթմէնի .	
ԱՄԱՍԻԱ. ՍԵՐԱՍԻԱ. Նազարէթ Եթ. Յ. Խաթմալլեան.	
ԵԻՌՈԿԻԱ. ԲԱՐԵԼԻԱ. Ե ՏԵՐՍԻԱ. Կիրակոս Եթ. Ս. Ղալաճեան.	
ԵՐԶՆԻԱ. Թաղէտ Եթ. Բաղրատունի. ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան .	
ՄՈՒՇ. Միկայիլ » Փօթիկեան.	
ՎԱՆ. ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խարաճեան .	
ՏԻԳՐԱՆԻԿԵՐՏ. Թաթմաս Եթ. Թալաճեան.	
ԵԻՌՍԻԱ. Գեորգ Եթ. Ոսկերչեան.	
ՄԱՐԱՇ. ՅՈՓԵՍ. Ֆէրհատ աղա Ս. Ֆէրհատեան.	
ՏՓԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղալաճեան.	
ԿԱԼԿԱՍ. Պետրոս աղա Հէփիլեան.	

4 15	Գանդ. Ա. Հիսար. Գանդ. Վանիւք. Վանիւք. Պէյիւք. 22
8 45	Պէյիւք. Բաշա. Գանդ. Գանդ. Ա. Հիսար. Գանդ. Վանիւք. Վանիւք. Պէյիւք. Բաշա. Գանդ. 23

ԿԱՄԱՌԱՋԷՆ ԵՒ ՆՈՂ ՇՈՂԵՆԱԿԵՐՈՒՆ

Ժամ	Երբեք	Թիւ
2 15	Գասդ. իւսկ. Պէշիկ. Գուր. Օրթ. Պէյիւք. Չէնկ. Սթէն. Գանտ. Ա. և Բ. Հիսար. Գանտ. Էմիրիկէն, Եշիք. Պէյիւք. Թարապ. Պէյիւք. Եշիք. Եշիք. Թարապ. Պէյիւք. Եշիք.	

ԱՐՆԱՄ ԵՒ ԳՈՐԹԱՔ

12	Ուղղակի Արնամ. Պէյիւք. 25
12 30	» » 2
1 30	» » 12
2	» Պէյիւք. 25
3	» » (Բաշա օրերը) 18
7 30	Պէյիւք. Օրթաք. Գուր. Արնամ. 2
9 15	Գանդ. Պէյիւք. Օրթաք. Գուր. Արնամ. 12
10	Գանդ. Պէյիւք. Օրթաք. Գուր. Արնամ. 2
11 45	Գանդ. Պէյիւք. Օրթաք. Գուր. Արնամ. 25
14 40	Պէյիւք. Օրթաք. Գուր. Արնամ. 2
12	Պէյիւք. Օրթաք. Գուր. Արնամ. Պէյիւք. 22

ԱՐՆԱՄ ԵՒ ԳՈՐԹԱՔ

1 30	Բաշա. Գանդ. Պէյիւք. Վանիւք. Գանդ. Ա. Հիսար. 24
3	Բաշա. Գանդ. Պէյիւք. Վանիւք. Գանդ. Ա. Հիսար. 22
9	Գանդ. Պէյիւք. Վանիւք. Վանիւք. Գանդ. Ա. Հիսար. 20
9 45	Գանդ. Պէյիւք. Վանիւք. Վանիւք. Գանդ. Ա. Հիսար. 17
10 30	Գանդ. Պէյիւք. Վանիւք. Վանիւք. Գանդ. Ա. Հիսար. 24
14 15	Գանդ. Պէյիւք. Վանիւք. Գանդ. Ա. Հիսար. 12
14 30	Գանդ. Պէյիւք. Վանիւք. Վանիւք. Արնամ. 5

ԻՍԿԱԿԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԿԵՐՈՒՆ

Ժամ	Երբեք	Թիւ
11	6 15	14 30
11 30	7	14 45
12	8 15	12 15
12 30	8 35	12 45
1 25	9 15	1 15
2	9 35	1 40
2 30	10	2 15
2 55	10 25	2 45
3 30	10 45	3 10
4	11 5	3 45
4 30	11 25	4 15
5 5	11 40	4 40
5 45	12	5 15

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Ժամ	Երբեք	Թիւ
11 30	5 25	11 30
12	6	12 15
12 30	6 35	12 30
1 4	8	1 8
1 30	8 40	1 30
2	9 20	2 30
2 30	10	2 30
3 5	10 30	3 5
3 45	11	3 45
4 30	11 30	4 30
5	12	5 12